



ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կուճարի» թերթի հավելված

1991 թ. հոկտեմբեր, № 47: Գինը՝ 50 կոպ.





ՄՈՎՍԵՅԱՆ ԽՈՐԵՆ ԳԱՌՆԻԿ

Ծնվել է 1964 թվականին Լենինականում: Հինգ տարեկանից ընտանիքով տեղափոխվել են Թբիլիսի: Ավարտել է Թբիլիսիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը: Բանակում ծառայելուց հետո ընդունվել է մեր քաղաքի մանկավարժական ինստիտուտի անգլո-ուսական բաժնի: Ուսման տարիներին ֆակուլտետի կոմերիտական քարտուղարն էր, մեծ հարգանք ուներ ընկերների շրջանում: Երազում էր ավարտելուց հետո աշխատել հարգազատ քաղաքում: Նա գրիվեց ինստիտուտում իր շատ ընկերների հետ՝ մտալով հավերժ ուսանելու:

Մորաքրոջ որդի՝ ԳԱՌՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՄՈՐ ԽՈՐԱԶԸ

Այս իմ սիրալուսն բալին, իմ սիրունիկ ԱՂՈՒՆԻԿ... Աղուսիկի նման էլ կարճ կյանք ունեցար, դաժան արհավիրքը գոնե մատղաշներից կշանքը ինչպե՞ր: Իսպանկերներից հետ մահկանացուդ կերեցիր Բ. Լա իրքայանիսի անվան Ձ 9 դպրոցում:

Արդյոք կանխագրու՞մ էիր դու, որ մի քանի օր առաջ նը կարվել էիր, նկարդ գաղտնի պահել ինձանից: Գիտե՞ի՞ր արդյոք, որ վերջին, ամենավերջին նկարդ էր լինելու...

Իմ անուշիկ Աղուսիկ, իմ աննման բալին, ես ու հայրդ ահիդ ավքան շատ ենք կարուով քեզ... Գո կորստյանք ես զգացի, որ ինձ համար կլանքք ստու է, ապրելի՞՜ անիմաստ: Այնքան էիր կարված հորդ, որ գաղտնիքներդ նրա հետ էիր կիսում: Ինչո՞ւ քեզ չինչացեց այդ անհողի երկրաշարժը:



ՇՈՂՈՎ ՄԱՐՏԻՆԻ ԱՂԱՄՅԱՆ

Ամենդ աշկնեղով ու հայացքով այդ աղջնակը ընդամենը 6 գարուն էր բոլորել, չհասցրեց գրամանաչ դառնալ և գոհ գնաց մահաամիտ աղետին:

Այդ օրը փոքրիկ Շողիկին տարել էին տատիկի տուն: Եվ քանի որ լաց էր եղել ու չէր ուզեցել այդտեղ մնալ, Շողիկի տատիկը շտապել է թողնիկին տանել, բայց չհասցրեց և 6 ամյա մանկիկը մնաց Կոչոտյան փողոցի Ձ 1 շենքի փրատանների տակ: Այժմ իբրև հիշատակ փոքրիկ Շողիկից մնացել են նրա խաղալիքները, որոնք սուրբ մատուցի նման պահում են ծրտողները:

ԿԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՋԱՎԱԿՆԵՐՍ

Մեկ ամիս հետո լրանալու էր Արթուրիս 16 տարին: Անհամբերությամբ էր սպասում այդ օրվան: «Մա, 1 ամիս հետո անձնագիր կստանամ, չափահաս մարդ կդառնամ»՝ անընդհատ կրկնում էր նա:

Արթուրս դպրոցում օրինակելի ու ստացավոր աշակերտ էր, շատ երազանքներ ուներ: Նրան մեծ ապագա էր սպասվում: Շատ էր սիրում գրադվել ռադիոտեխնիկայով: Եղջո՞ր՝ Խորենիս հետ քաջվում էին մի անկյուն և ժամերով զբաղվում սիրած գործով: Դարապում էին սպորտով, սիրում դաշնամուր նվագել:

ԱՐԹՈՒՐՍ ՄՈՐՆԵՆԻՑՍ մեկ տարով էր մեծ: Վերջերս, երբ



ԼՅՈՎԱՑԻ ՄԵԼԻՔՅԱՆՆԵՐ

Նա թերևս մեկ Խորենը անվորելու մեջ, Խորենը նախատում էր նրան, նա կատակով պատասխանում էր. «Յոսոտ չունի, աշխարհի վերջն է»: Երևի անմեղ հոգու թելադրանքն էր դա, ինչ իմանամ:

Երբ ուսումը շարունակելու մասին խոսք էր գնում տանը, Խորենն, այդ համեստ ու բարի զավակն, ասում էր. «Արթուրը ուր գնաց, ես էլ հետն եմ գնալու»: Աղետն էր շար բարիտը կիսատ թողեց բալիկներին երազանքը: Երկու եղբայր անբաժան հեռացան մեզանից, բայց ոչ ուսանելու, այլ... անկորստաբար: Ձ 16 դպրոցը նրանց զերեզմանը դարձավ. թաղվեցին զույգ թևերս:



ԱՆՈՒՇՈՎ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԳԱՌՆԱՆ

Ծնվել է 1969 թ., Գուկասյանի շրջանի Գոգանովիս գյուղում: Բարձր գնահատականներով ավարտելով միջնակարգը, ընդունվեց Լենինականի պոլիտեխնիկոմի ապրանքագիտության բաժնի: Այդ չարաբաստիկ օրը պրակտիկայի էր հանրախանություն, որտեղ էլ իր համակուրսեցիների հետ կտրվեց 19 գարունը՝ նոր քոլորած աղջկա կյանքի թելը: Նա իր բարությունը, խելացիությանը և բոլորին օգնելու պատրաստակամությամբ աչքի էր ընկնում, վաղեմ ընկերների ու հարազատների սերն ու հարգանքը:

ՋՈՏԱ ԳԱՌՆԱՆ



ՄԱՐԻՆԱ ԵՐՎԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնվել է 1951 թ., մարտի 19-ին, Այվաղրդի քաղաքում: Մոլորական կենսագրություն ունեցող այս կապուտաչյա աղջկը միջնակարգ ավարտելուց հետո ընդունվում է տեղի թիմակալ տեխնիկոմը: 1972 թ. ամուսնացել է Լենինական քաղաքում, ունեցել երկու զավակ՝ տղա և աղջիկ: Եղել է հյուրանար, բարի, հոգատար պատկերիկ: Աղետի օրը տանն էր՝ Ծրուկզի Ձ 117, շենքի Ձ 11 բնակարանում: Երբ ակվել է երկրաշարժը, նա տանեցիներին ասել է կանգնեք հիմնական պատի մոտ: Պատմում են՝ որ հատակը բացվել է ու երիտասարդ կինը կոպ է գնացել փրատաներին: Իսկ հարազատները կենդանի են մնացել, իրենց աչքերով տեսնելով ՄԱՐԻՆԱՑԻ մահը:



Շատերի հետ միասին աղետը չինույցեց նաև սիրելի կրտսեղ, 33-ամյա ԱՆԱՀԻՏ ՄԻՇԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ կյանքը: Անախտը ծնվել է Լենինականում, աշխատում էր էլեկտրատեխնիկական գործարանում: Չոհվեց տանը, «Եղան կրկնի» թաղամասում:

Ինչ իմանար, որ այդ օրը իր շատ սիրելի երկու բալիկներին՝ Սմբատին ու Աննային, վերջին անգամ էր ճանապարհում ղրկուց, վերջին անգամ համբուրում: Սիրելի Աննախո, շատ էիր երազում նոր բնակարանի մասին, ստացար և շատ ուրախ էիր, բայց, ավար, ամեն ինչ մնաց կիսատ:

ՄԱՆՈՎ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ



ԲԵՎԶԱՏՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՄԻՆԱՍԻ

Ծնվել է 1937 թ. Լենինականում: Աշխատում էր «Հայ-էլեկտրամոնտեխնոստո» արտադրական միավորումում:

Այդ օրը սովորականի՞ պես մայրս պատրաստվում էր իսկ նույն գնալու՝ ամենօրյա գնումներին: Հարևանը հրավիրում է տուն, որը և դառնում է ճա կատարական մորս ու մեզ համար:

Մայրս աշխույժ կին էր, աշխատասեր, հոգատար ու սիրող մայր էր: Երբեք չէր հոգ տում: Ամուսնացրել էր զորջու և ինձ՝ միակ տղային: Փախազում էր թոռնիկ ունենալ: Սիրելի մայրիկ, դու միշտ կաս և կպարեն իմ, հորս, երկու թույրերիս ու բոլոր հարազատների սրտերում:



ՀԱՄՍԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկար հարց ու փորձից հետո, այդպես էլ չկարողացանք պարզել այս համեստ ու աշխատասեր կնոջ ծննդյան թեմակամը: Մանկուց որր է մեծացել, ամուսնացել է և ծնել մեկ արու զավակ, որն այժմ սովորում է Օռչանիկ Կուրդիկյանի անվան Ձ 5 գիշերօթիկ դպրոցում: Համակն աշխատել է Ս. Լուկաշինի անվան մակամքային ֆաբրիկայում: Անավոր աղետի օրը տանն էր, ուր և մնաց Օրսախանյանի հոգաբարձու թոռնիկը: Աղետից հետո մինչ ապսոս որդի՛՛ Արտավազը փնտրում է հարազատ մոր շիրիմ:



Պատմում է կիեր ԴՐՍԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԵՆԻ (ՀՈՎՀԱԶ) (1954-1988)

Հուլյանբարից այդքան է զորված, հնարավոր չէ շատ բան ավելացնել, գրի, որ կյանքդ ի՞նչ էր կյանքդ: Գրե՛լ ինձ ինչ-ինչ հիշողություններով ու զգուհուրդ չունենե՛րով: Ախորժանի շրջանի կամո գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Ռուբենը

ընդունվեց մանկավարժական ինստիտուտ, այնուհետև աշխատեց անողջապահության ավտոարտադրումում: Հիմա թո մասին ավստան. թով են խոսում գործընկերներդ: 1988-ի հուլիսին բնակարան ցտացանք Վարդապ

ժողովում: Եստ երջանիկ էիր, անկախ այն տեղից ընգամներ մի քանի անգամ, հիմա անիծում եմ այն օրս, բնակարանը՝ ուր զոհվեցիր... Իս, շարունակ պատմում էիր թո հորից, ամեն անգամ նրան հիշելիս արցունքներ էի տեսնում թո աչքերում: Բայց դու չգիտեիր, որ անհայր են մեծանալու լըրս:

տարեկան Արտազ ու թո մահից հետո ծնված Արմինեն: Երանք շարունակ թեզակից են հարցնում: Տղա ուղում է նմանվել քեզ, ասում է. «Մամա չան, մի լաց եղի, ես պապայի նման եմ, նրա պես լավ մարդ կդառնամ, քույրիկին էլ կպատենմ, թե ինչպես էին սիրում նրան թո լըրք»: Հովհաչ չան, մեկը ամբողջ հոգով քեզ հետ ենք:



ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ

ԳՈՒԲ ԻՆՁ ՀՅՏ ԵՔ, ԻՄ

ԱՄԻԿՆԵՐ

ՀՐԱՆՐ ՈՒՌԵՆՏԻ ԱՍ-ԽԱԼԱՐԱՇԱՅԱՆ: Հրայր 28 տարեկան էր: Ծնվել էր Լեւինսկայում: Ավարտելով միջնակարգը, ընդունվեց Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Երկրորդ կուրսում էր, երբ գործընկերների ջանքերով ծանաչություն, այսպես կերպարձամ, շարունակեց և ավարտեց ինստիտուտը:

Հրայր աշխատում էր Մուկուլյան շրջանի դրամիայի շտաբում: Նոր էր ամուսնացել, ղեկավարեց 28-ին պետք է լրանար ամուսնության մեկ տարին: Ավագ աղետը չթողեց, որ մեր երջանկությունը կատարյալ լիներ:

ԿԱՐԵՆ ՈՒՌԵՆՏԻ ԱՍԽԱԼԱՐԱՇԱՅԱՆ

22 տարեկան էր, սովորում էր մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 2-րդ կուրսում էր, գորակույզեց բանավ: 2 տարի ծառայելուց հետո շարունակեց ուսումը: 4-րդ կուրսում էր, երբ եղավ դժգոհան աղետը: 2 օր ողջ մնաց փրատակների տակ, խոսում էր, ապա կորցնում գիտակցությունը... Աստիճանը ընկել էր ձախ ոտքին: Փրատակների տակ, անդա-

ՀՈՒՋՎԱԾ Է ՄՈՍԿՎԱՆ

ՄՈՍԿՎԱ. Հայկական ԽՍՀ մշտական ներկայացուցչություն:

Վաղ առավոտից մինչև ուշ երեկո, թերևս ամբողջ գիշերվա ընթացքում, չեն դադարում զանգել գրեթե բոլոր հեռախոսները:

Իսկ ներկայացուցչությունում միշտ մարդաշատ է: Գերազանցաբար են գործում ներկայացուցչության ռեֆերենտները, բոլոր աշխատողները: Մինչև ղեկավարների 7-ը՝ մինչև Հայաստանում տեղի ունեցած (անվոր երկրաշարժը մարդիկ զբաղված էին Ադրբեջանից եկած փախստականների տեղավորման, կենցաղային բազմաթիվ հարցերով) պետք է նրանց ցույց տալ նրա՞նչ օգնություն, ապահովել հյուրանոցով, երկաթուղային ու ինքնաթիռային տոմսերով: Թվում է, թե կարիք չկա ասելու, թե ինչպիսի դժվարությունների հետ է կապված այդ ամենը՝ անըստապեղծորեն խափանվել էր աշխատանքային սովորական ռիթմը: Չուզած դրան ներկայացուցչության աշխատողների՝ Գ. Ներսիսյանի, Ռ. Խաչատրյանի, Ռ. Հովհաննիսյանի և մյուսների ջանքերով լուծվում են օպերատիվ կերպով, առանց ձգձգման:

Ներկայացուցչությունում են գտնվում ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ աշխատանքի պետական կոմիտեի ներկայացուցիչները, որոնք փախստականներին առաջարկում են բնակության մեկնել Ռուսաստանի տարբեր շրջաններ, որտեղ նրանք անառարկելիորեն կապահովվեն աշխատանքով ու բնակարանով:

Իսկ ղեկավարների 7-ից հետո, էր աշխատող մեկ տարածվեց Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի մասին լուրը, ասես մոզական ձողիկի հարվածով, պաշտոնական հաղորդագրություններից շատ

առաջ, Մոսկվայում սկսվեց երկրաշարժից տուժածներին օգնելու զանգվածային շարժում: Զանգահարում էին մոսկվացիները՝ առաջարկում հագուստեղեն, վերնակներ, բարձեր, նյութական այլ կարգի իրեր ու դրամական օգնություն:

Իսկ հաջորդ օրը Մոսկվայի բաղադրական, բազմաթիվ միջնաբերդայիններում, հիմնարկներում ու գործարաններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեցին հատուկ շտաբներ, որոնք դժվարությամբ էին կարողանում բավարարել Հայաստան՝ աղետի վայրը մեկնելու խնդիրները ունեցողների պահանջը...

Իսկ մշտական ներկայացուցչությունում անհատներից ստացած հագուստեղենը, իրերը անմիջապես փոխադրվում են օդանավակայան՝ ուղարկվում երկրաշարժից տուժածներին...

Ուրբաթ օրը՝ ղեկավարների 9-ին Հայաստանի մշտական ներկայացուցչությունում հավաքվել էին Մոսկվայի հիսունը գիտնականներ, ստեղծագործական միությունների ներկայացուցիչներ, որոնք կազմեցին կոչ՝ ուղղված Միության և աշխարհի գիտական ու ստեղծագործական մտավորականությանը: Այդ կոչում ասված էր.

«Հայ ժողովուրդը ստիպված է եղել շատ անգամ կրել ճակատագրի ծանր հարվածները: Այսօր նրա վրա տեղացել է նոր աղետ: Մոսկվայի մտավորականության անունից մենք խոր ցավակցություն ենք հայտնում հայ ժողովրդին: Մենք հավատում ենք, որ նա կորցրածը բոլոր մարդկանց օգնությամբ, ինչպես և ամ-

(Տարածակախություն՝ 4-րդ էջում)

ՍՍՀՄ ԿՑԱՆ ԳՈՒՑՐԵՐԸ



Սիրունուհի Ծնվել է՝ 1972 թ. ապրիլի 1-ին: Մինչև 8-րդ դասարանը սովորել է Ախարյանի № 1 միջնակարգ դպրոցում, այնուհետև տեղափոխվել № 85 պրոֆտեխնուսումնարան: Նա ընտրել էր կար ու ձևի մասնագիտությունը և որոշել էր իր շնորհքից մաս հանել ապագա տանկիստ: Այդ օրը չգնաց ուսումնարան և զոհվեց տանը, երկու քույրերի հետ:

Սիրունուհի շատ էր սիրում ծաղիկներ և այժմ իր սիրած ծաղիկները զարդարում են նրա շիրիմը...

2-րդ լուսանկարում փոքրիկ տղայի նմանվող ՀԱՅԱՍՏԱՆԸ ծնվել է 1978 թ. փետրվարի 8-ին, ստորել է № 4 դպրոցի 8-րդ դասարանում:

Մի շաբաթ էր, ինչ հիվանդ պատված էր թոքաբորբով: Գիշերները չէր քնում, շատ էր տանջվում, «Ինչ կիսի, ինձ շուտ բուժեք, ուզում եմ առողջանալ»: Փոքրիկը շատ էր սիրում մայրիկին: Ամեն օր դպրոցից տուն գալիս, փախվում էր նրան և ասում. «Կարոտել եմ...»:

ՀԵՐՄԻՆՆԵՆ երեք ոչ ոքի չէր ներացնում, շատ էր սիրում բնկերներին: Նա ծնվել էր 1978 թ. Ախարյանում: 2-րդ դասարանից առաջարկ գերազանց էր սովորում և ամեն օր տուն մտնելիս ասում էր. «Մայր, այսօր հինգ եմ ստացել»: 10-ամյա աղջնակը արդեն ուներ հետաքրքրությունների իր շրջանակը և դեռ որքան լավ գործեր ուներ իրականացնելու, որ մնացին անկատար:

Քույրը՝

ԶԱՐԵԼԱ ՍԱՀԱՅԱՆ



մահատեցին ոտքը և տեղափոխեցին № 1 բուժմիավորում: Ասկայն բազիկիս սիրող չդիմացավ:

Կարեն, որդիս, շատերի հետ դու ևս չստացար քո դիպվածը: Գրպուկների հանձնման օրը քո համակուրսեցիները այցելեցին գերեզմանատուն և մեխակներով ծածկեցին քո շիրմաթուղի:

Ամիսներ անց, մահացավ հայրդ, չդիմանալով այս ամենին:

ՀԱՍՄԻԿ ՄԵԼՆԵՍԻ ԱՍԽԱԼԱՐԱՇԱՅԱՆ

24 տարեկան էր, ծնվել էր Երևանում: Մեկ տարին նոր պետք է լրանար հարսիկիս, որ գտնվում էր մեր տանը: Աշխատում էր № 2 մանկական բուժմիավորումում, որպես բուժօրրու: Շատ համեստ էր, բարի, պարտաճանաչ, նրան սիրում էին կոլեկտիվում: Ֆիզիոգիական արձակուրդում էր, անհամբերությամբ էր քսպատում առաջնեկին:



ՄՈՒԹԱՅՑԱՆ ՀԱՅՎՈՒՇԻԿ ՌԱՅԻԿԻ

ծնվ. 1974. 7/12

Ծառ գեղեցիկ օր էր 1974 թ. ղեկավարների 7-ը, երբ ծնվեց նորաբողոքը աղջիկը ՀԱՅՎՈՒՇԻԿԸ, ծնողների ուրախությունը: Բայց կարճ տեղե այն, վրա հասավ 1988 թ. ղեկավարների 7-ը: Գաժան աղետը ծովափնից նման ներխուժեց և խլեց քո կյանքի ամենագեղեցիկ օրը, ծննդյան օրը: Լրանալու էր քո 14-րդ գարունը, բայց չլուսեցիր, փշրեցիր քո բոլոր իղձերը: 29-ամյա դեպք, այն ինչու՞, պատրաստվում էիր ծնունդդ տունդու, բայց ափա, առնում ենք մենք բոլորս քո շիրիմին, ծաղիկներից հյուսում գալիք քո սիրելի գարունները: Քո համադասարանցիները ազդարան չեմին են, ընտրում են մասնագիտություն, իսկ դու ընտրեցիր քո մահը: Գնացիր անվարդարձ, բոլորի սրտում թող նեղով վիշտ ու փստուսը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՂԱՐՇԱՅԱՆ ԱՎԿԱՅԱՆ

(1948—1988 թ. թ.)

ՎԱՂԻՆԱԿ ԿԱՄՄԱՐԻ ԱՎԿԱՅԱՆ

(1944—1988 թ. թ.)

Գեղեցիկ աչքեր, սխուր, թախծոտ ու սովորիչ: Կարծես

ծնվել էիք միմյանց համար, երկուսով էլ հրաժեշտ տվեցիք կյանքին: Ընդամենը 40 և 44 գարուն ապրեցիք, չհասցրեք տեսնել ձեր երեխաների ուրախությունը: Ծառ էիք սիրում կյանքը, բոլորից շատ՝ ձեր երեք աղջիկներին, համոզված էիք, որ մտղական գորգուրանքով հեռու կբազմեք ամեն դժվարություններից, համոզված էիք, որ այդ դժգոհ վտանգից փրկված են: Ապրում են հիմա, բայց սրտերում խոր վերք թողած, կորցրած ամենաթանկ երջանկությունը: Այս անհիշյալ վայրկյան, այն ինչու՞ կորցրեցիք, մեր սիրուք:

ԶՈՑԱ ՓՈՐՈՍՅԱՆ

(1951—1988 թ. թ.)

Որսիս, կատակասեր, առաքինի մի կին էր Զոյան՝ ընտանիքի համար հոգատար մի մայր: Սիրում էր մաքրություն, պարզություն, չափից դուրս ուշադիր էր երեխաների կատամար: Այդ օրերին մի տեսակ կախարհ ու մասնակցու էր դարձել: Ի՞նչ էր մտածում: միգրացի սիրող վկայում էր, որ մտածում է մահը: Կատակածում էր Զոյան միշտ և իրոք, չսեպակ...իր երեք երեխաների ուրախությունը:

